


ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՅՐԻԿԻՍ

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա.Գ., Պատուհան դեպի հավերժություն, Ե., Էդիթ պրինտ հրատ., 2013, 321 էջ:



Գայանե Հարությունյանի կազմած և հրատարակած նոր ժողովածուն նվիրված է մեծ ժողովրդականություն վայելող, անվերապահորեն սիրված, տաղանդավոր դրամատուրգ Ժորա (Գևորգ) Հարությունյանի հիշատակին: Ժողովածուից հորդում է մի վարակիչ ջերմություն, որ կարող էր ստեղծել հարազատ հորը նվիրված, նրա էությունը ճանաչող, կիրթ և զգայուն դուստրը, որը արդի հայ գրական կյանքին ընծայել էր արդեն մեկ այլ գիրք՝ «Եկար, զարմացրիր, գնացիր...» խորագրով: Այն 2006-ին «Ազգ» թերթում մեծ դրվատանքով գրախոսել է գրականագետ Անուշավան Զաքարյանը:

Շատ-շատերն են գրել Ժորա Հարությունյանի թատերական գործերի և նրա սցենարով նկարահանված ֆիլմերի մասին, իսկ խորհրդային գրականության հիանալի գիտակ Սևակ Արզումանյանը նրա ստեղծագործական հարստությունը գնահատել է «Հումորի ասպետը» մենագրությամբ:

Ժորա Հարությունյանի հումորի պատճառած հաճույքը, «Ոսկե ցլիկ», «Շրթներկ № 4», «Խոշոր շահում», «Հրդեհ» և այլ ֆիլմերը դիտելով, ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ այսօր, մարդիկ պարզապես վայելում են: Դրանք հիմա էլ զարմացնում են իրենց սուր դիտողականությամբ: Չգիտեմ որն է գրական երկ, որն այնքան սիրով նկարագրեր խորհրդահայ գյուղի ազնիվ մարդկանց կամ պատկերներ կոլխոզի նախագահի այնպիսի կերպար, որն իր՝ գրոտեսկի հասնող նվիրվածությամբ միաժամանակ ներկայացնել անցյալի իրականության որոշ անհեթեթությունները:

Ժորա Հարությունյանի դրամատուրգիան բազմիցս գրախոսվել է և արժեքավորվել: Այդ բացահայտումների ընտրանին առկա է այս ժողովածուում: Դրամատուրգին բարձր են գնահատել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռուբեն Զարյանը, Լևոն Հախվերդյանը, Արամ Գրիգորյանը... վերջինս՝ հիացմունքի անթաքույց դրսևորումներով: Շարունակական դրվատական հողվածներով հանդես է եկել Պերճ Զեյթունցյանը: Հողվածները

նվիրված են «Ղազարը գնում է պատերազմ», «Խաչմերուկ», «Հարսնացու հյուսիսից», «Հունիս էր, արև», «Քո վերջին հանգրվանը» և այլ ստեղծագործությունների: «Հարսնացու հյուսիսից» ֆիլմը ցարդ շարունակում է մնալ խորհրդային շրջանի կինոնկարների՝ հաճախ դիտվողների տիրույթում և բոլորովին չի հնացել: Նշանավոր դերասան Արմեն Զիգարխանյանի խոստովանությամբ՝ Ժորա Հարությունյան կարդալիս միշտ հիշում է Հովհաննես Թումանյանին, որովհետև նա հայ հանճարեղ գրողի մտքի հստակությունն ունի, և ամենակարևորը՝ «Ժորայի նմանները կյանքը լցնում են լավատեսությամբ, մեծացնում են մեր հավատը կյանքի նկատմամբ» (էջ 260):

Ժորա Հարությունյանի թատերգությանը արձագանքել են ականավոր բեմադրիչներ Վարդան Աճեմյանը, Հրաչյա Ղափլանյանը, Երվանդ Ղազանյանը, Վահե Շահվերդյանը, թատերագետներ Խաչատուր Ավագյանը, Վարսիկ Գրիգորյանը, կինոգետ Դավիթ Մուրադյանը և այլք:

Հայ թատրոնի երախտավորներ Մհեր Մկրտչյանն ու Սոս Սարգսյանն իրենց բնութագրականներում հատուկ շեշտում են Ժորա Հարությունյանի կերտած կերպարների կենսական կարևորությունը: Արձակագիր, դրամատուրգ, նաև գրականագետ Նորայր Ադալյանը հիմնավորում է այն հանգամանքը, թե նախընթաց գրական որոշակի դրսևորումներ հասցրին Ժորա Հարությունյանի «Խաչմերուկ» հոյակապ դրամայի երևան գալուն:

Այս գիրքն ունի բազմաթիվ բացահայտումներ, ինչպես, օրինակ, XX դ. վերջին տասնամյակների հայ դերասանական արվեստի մեծերից Մհեր Մկրտչյանը հայտնի է դարձել Ժորա Հարությունյանի «Սրտի արատ» կատակերգության Վիդով Գվիդոնի փայլուն դերակատարումով:

Գիրքը բացում է դրամատուրգի «ժամանակի շունչն ու ոգին» խորագրով հրապարակախոսությունը, որը վկայում է մշակութային գործիչներին (Վարդան Աճեմյան, Մհեր Մկրտչյան, Լևոն Հախվերդյան, Սոս Սարգսյան, Սվետլանա Գրիգորյան) և արվեստի այս կամ այն խնդիրներին առնչվող՝ հեղինակի սրտացավ ու անաչառ քաղաքացիական դիրքորոշման մասին:

Պակաս հետաքրքիր չէ նաև «Ծիծաղի խաչմերուկներում» բաժինը, որը բացահայտում է դրամատուրգի աստվածաշնորհ հումորը:

Երրորդ բաժնում զետեղված է Ժորա Հարությունյանի չափածո խոսքը՝ «Իմ լռությունը» խորագրով: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Գրիգորյանը դրամատուրգի չափածոն այսպես է բնութագրում. «Ժորա Հարությունյանի պոեզիան կարծես նրա ապրած կյանքն է և հուզախոով գիտակցությունը, և ողբերգական բանաստեղծությունները ոչ թե սոսկ ժանր են, այլ հաճախ միայնակ և թախիծով ակոսված հոգու վիճակ: Անաղմուկ և անձայն այդ բանաստեղծությունները միահյուսվում են Ժորա Հարությունյանի թատրոնին և նրա կյանքի դրամային» (էջ 118):

Բանաստեղծությունները մեծ մասամբ գրվել են 1989 թ. և դրանից հետո: Ողջ ստեղծագործությամբ մարդու մեջ բարություն սերմանող գրողը մեր երկրի անկախության տարիներին իր չափածոյում խստորեն քննադատում է կյանքի արատավոր կողմերը և դա անում է անհանդուրժող մտավորականի

ընդվզումով: Նա շատ դիպուկ է նկատել, թե ինչպես խորհրդային «մուրճ ու մանգաղը» խնկարկողները միանգամից դառնում են «խաչապաշտ»:

Հոգնել եմ, ավա՛ղ, և այդ ամոթից,
Ամոթից խոսող անամոթներից...
Փառքի, համբավի համար դողացող,
Դիրքի, աթոռի համար սողացող,
Մի ձեռքով առնող, մի ձեռքով ծախող
Բուժ ու բախտավոր երեսպաշտներից,
Կեղծավոր, քսու այդ սատրապներից,
Խղճին հազար մեղք՝ այդ անմեղներից,
Այդ խաչից խոսող խաչագողներից...

Ժորա Հարությունյանը թողել է մաքսիմներ, որոնց մի մասը նույնպես տեղ է գտել այս գրքում: Դրանք իմաստուն բանաձևեր են՝ «Ընկնելու համար մեծ խելք պետք չէ», «Երախտագիտության ճանապարհը ամենակարճ ճանապարհն է աշխարհում», «Բարությունից է ուժ առնում չարը», «Եթե մարդ չգիտե, թե որտեղից է սերում ինքը, նա ոչինչ չգիտե», «Երևի մի կյանքը քիչ է մարդ արարածին՝ համոզվելու, որ հայրենիք ունենալը արյան պես անհրաժեշտ մի բան է», «Սեփական հզորության մեջ պետք է գտնել սեփական փրկությունը»: Վերջին իմաստախոսությունը խորամիտ պատգամ է՝ ուղղված թե ամեն պետության և թե ամեն անհատի:

Ժորա Հարությունյանի թատերգությունները բեմադրվում էին ոչ միայն Հայաստանի թատրոններում, այլև նախկին Խորհրդային Միության հանրապետություններում: Հատկապես «Խաչմերուկ» դրաման բեմադրվել է ամենատարբեր երկրներում, այդ թվում նաև Հունգարիայում: Հատկանշական են ռուսերենով լույս տեսած մեծաթիվ դրվատական խոսքերը, որոնք տպագրվել են Խորհրդային Միության „Правда“, „Известия“ պաշտոնաթերթերում, մշակութային ու գրական կարևորագույն՝ „Литературная газета“, „Советская культура“, նաև Հայաստանի „Голос Армении“, „Литературная Армения“ և այլ պարբերականներում:

Հրաչյա Ղափլանյանը «Հարսնացու հյուսիսից» ներկայացման մասին „Советская культура“ թերթում գրում է. «Բոլոր մարդիկ շատ նման են և կարող են սերտորեն բարեկամանալ, անկախ այն բանից, թե որտեղ են ծնվել՝ արևաշող Հայաստանում կամ կեչիներով ու կապուտակ գետերով Հյուսիսում» (էջ 173):

Գրքում բավականաչափ տեղ է հատկացված գրողի հիշատակին ուղղված հրաժեշտի խոսքերին: Իրեն հատուկ հախուռն ու կրքոտ կեցվածքով՝ բանաստեղծ Դավիթ Հովհաննեսը գրում է. «Ակամա մտաբերում ես շեքսպիրյան արտահայտությունը. «Մա՛րդ էր, Հորացիո՛...»: Այո, Գեորգի Մաղաթելովիչը ՄԱԸԴ էր մեծատառով, և բոլորն էին սիրում նրան, որովհետև ինքը սիրում էր բոլորին» (էջ 298):

Իսկ Արամ Գրիգորյանը գրողի 80-ամյակի առիթով գրված հոբելյանական խոսքը խորագրել է «Ժորայի հետ բարեկամությունը հավերժական ուրախություն էր»: Նման բնութագրականները հավաստում են գրողի էության

և նրա ստեղծագործության բովանդակային ուղղվածության հոգեհարազատությունը:

Գրքի վերջին հատվածը («Տարիների հորձանուտում») ֆոտո-ժամանակագրություն է, որը լուսանկարներով տեսանելի է դարձնում գրողի անցած ուղին՝ որպես հայ թատրոնի և կինոյի պատմության տարողունակ ժամանակահատված:

Ժորա Հարությունյանը ըստ արժանվույն է գնահատվում նաև կառավարության կողմից. այսպես՝ 1979 թվականին ԽՍՀՄ-ում դրամայի համար ստանում է Հայաստանի պետական մրցանակ: Նա նաև արվեստի վաստակավոր գործիչ էր և ուներ բազմաթիվ այլ մրցանակներ, որոնց նկարներն ու վավերագրերի պատճեններն առկա են գրքում: Նշենք, որ ժողովածուում զետեղված մեծաքանակ հոդվածները ներկայացնում են Ժ.Հարությունյանի գրական հարուստ ժառանգությունը:

Ժողովածուն ապագա թատերագետներին և գրականության պատմաբաններին իր բովանդակությամբ մատակարարում է հարուստ նյութ: Բանասեր, գրականագետ, լրագրող Գայանե Հարությունյանը մի հրաշակերտ հուշարձան է ստեղծել՝ նվիրված իր հոր՝ մեծատաղանդ անհատի, դրամատուրգ Ժորա Հարությունյանի հիշատակին, և Հովհաննես Շիրազի հետևությամբ այն կարող է կոչվել «Հուշարձան հայրիկի»:

Չմոռանանք՝ գիրքը հրատարակվել է ՀՀ մշակույթի նախարար մեծարգո Հասմիկ Պողոսյանի աջակցությամբ, Գայանե Հարությունյանի հիանալի ձևավորումով և «Էդիթ պրինտ» հրատարակչության (տնօրեն՝ Մկրտիչ Կարապետյան) բարձրորակ տպագրությամբ:

**ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա.Գ.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**